

ՈՒՂՂԱԶԻԳ ՀԱՄԱՏԵՔՍՏԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ Զ.Գ. ԲԱՅՐՈՆԻ ԱՏԵՂԾԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Տաթևիկ Մովսիսյան

Երևանի պետական համալսարան

Հոդվածում դիտարկվում է ուղղաձիգ համատեքստի դերը գրական ստեղծագործություններում, մասնավորապես՝ անգլիացի ակնառու ռոմանտիկ գրող Ջ.Գ. Բայրոնի գործերում: Հոդվածում շեշտադրվում է ընթերցողի՝ այսպես կոչված «նախագիտելիքի» կարևորությունը ուղղաձիգ համատեքստի պատշաճ ընկալման առումով: Հետևաբար ցանկացած գրական ստեղծագործություն ամբողջովին հասկանալու համար անհրաժեշտ է տարբերակել խոսքի լեզվաբանաստեղծական հնարները՝ այլուզիաները՝ գրական անդրադարձները, մեջբերումները, փոխաբերությունները, ռեալիաները՝ իրակությունները, և այլ լեզվաոճական միջոցները, որոնք հուզական երանգավորում և լրացուցիչ իմաստ են հաղորդում գեղարվեստական ստեղծագործությանը:

Իսկ Ջ.Գ. Բայրոնը մեծ վարպետ է այնպիսի հնարներ կիրառելու առումով, որոնք օժտում են նրա գործերը անզուգական գեղագիտական ազդեցությամբ՝ միաժամանակ հարստացնելով դրանք պատմական և մշակութային արժեքավոր տեղեկատվությամբ:

Բանալի բառեր. լեզվաբանաստեղծական միջոցներ, լեզվաոճական հնարներ, գրական անդրադարձ, մեջբերում, իրակություն, գեղագիտական ազդեցություն, ուղղաձիգ համատեքստ:

Ներածություն

Անգլիացի մեծագույն բանաստեղծ Ջ.Գ. Բայրոնի ստեղծագործությունները համաշխարհային գրականության պատմության և հասարակական մտքի ամենակարևոր երևույթներից են: Նրա բանաստեղծական երկերում մարմնավորված են դարաշրջանի ամենասուր և խիստ արդի խնդիրները: Դրանց ռոմանտիկական-խորհրդանշական կառուցվածքը արդեն մատնանշում է հարցերի այն շրջանակը, որոնց մանրակրկիտ մշակմամբ զբաղվելու էր 19-րդ դարի արվեստը: Բայրոնի թողած ժառանգության գեղարվեստական վիթխարի արժեքը անբաժան է նրա պատմական նշանակությունից: Նրա պոեզիան, որ 18-րդ դարի վերջի և 19-րդ դարի սկզբի հեղափոխական ցնցումների ուղղակի արձագանքն էր, առավելագույն ցայտունությամբ արտացոլեց եվրոպական ռոմանտիզմի (որն առաջացավ որպես ֆրանսիական հեղափոխության և նրա հետ կապված Լուսավորության փոխազդեցություն) ընդհանուր դիրքերը:

Ֆրանսիայում հեղափոխական իրադարձությունները ցնցեցին ողջ աշխարհը, իսկ Անգլիայում տեղի ունեցավ մեկ այլ՝ անաղմուկ, սակայն ոչ պակաս կարևոր հեղափոխություն՝ այսպես կոչված արդյունաբերական հեղաշրջումը, որը մի կողմից առաջացրեց արդյունաբերական քաղաքների վիթխարի աճ, մյուս կողմից ծնեց սոցիալական աղաղակող աղետներ՝ սով, պոռնկություն, հանցագործության աճ, աղքատացում և գյուղի լիակատար քայքայում:

Այս սեղմ պատմական անդրադարձը պատահական չէ, քանի որ այն սերտո-

րեն առնչվում է վերոնշյալ թեմային, այն է՝ Բայրոնի ստեղծագործություններում ուղղաձիգ համատեքստի դերին, այսինքն՝ պատմական փաստերի և իրադարձությունների գետեղմանը հեղինակի ստեղծագործություններում: Այսպիսով, սույն հոդվածի նպատակը Բայրոնի ստեղծագործություններում ուղղաձիգ համատեքստի դերի, ինչպես նաև այդ համատեքստի արտահայտման լեզվաոճական հնարների և միջոցների բացահայտումն է:

Ուղղաձիգ համատեքստը՝ որպես բանասիրության արդի խնդիր

Նախ և առաջ հարկ է պարզաբանել, թե ինչ ասել է ուղղաձիգ համատեքստ: Ուղղաձիգ համատեքստը ոչ միայն որպես բանասիրության արդի խնդիր, այլև որպես վերջինիս նոր զարգացող և դեռևս լուրջ ուսումնասիրություններ պահանջող ուղղություն է:

Հայտնի է, որ ցանկացած համատեքստ հնարավոր է վերլուծել տեքստի շրջանակներում: Ուստի հարկ է նշել, որ բանասիրության զարգացման ներկայիս փուլում խիստ արտահայտված է տեքստի ընկալման խնդիրը: Եվ այս խնդրի լուծմանը հասնելու համար անհրաժեշտ է տարբերակել տեքստի ընկալման երկու կողմեր: Առաջին կողմը տեքստի ընկալումն է ուղիղ իմաստով, առանց որի իմաստավորված ընթերցումը անհնար է, այսինքն՝ բառերի, արտահայտությունների, պատկերավոր խոսքի արտահայտման միջոցների ընկալումը: Երկրորդ կողմը կապված է այնպիսի սահմանումների հետ, ինչպիսիք են «լեզու և գրականություն», «ոճագիտություն և գեղարվեստական խոսքի պոետիկա», ինչպես նաև ներառում է մարդու վրա զգացմունքային տարրերի ազդեցությունը (Задорнова 1984): Տեքստի ընկալման երկրորդ կողմն առնչվում է այնպիսի կատեգորիաների կամ կարգերի հետ, ինչպիսիք են ռեալիան (իրականությունը), գրական անդրադարձը, մեջբերումը, փոխաբերությունը և այլն: Իսկ տեքստը հնարավոր չէ ամբողջովին պատկերացնել առանց վերոհիշյալ կարգերի իմացության և ընկալման:

Այսպիսով, այս կամ այն ստեղծագործության, հեղինակի կամ գրական ամբողջ մի ուղղության ուղղաձիգ համատեքստը պատմաբանասիրական բնույթ կրող տեղեկությունն է, որն իր մեջ ներառում է ռեալիաներ, տարատեսակ գրական անդրադարձներ, մեջբերումներ և այլ լեզվաոճաբանական միջոցներ: Սակայն այստեղ կարևոր է տարբերակել ուղղաձիգ համատեքստը և «հենքային գիտելիքը» (Гюббенет 1981:498): Հենքային գիտելիքը յուրաքանչյուրին ծանոթ փաստերի ամբողջությունն է: Հենքային գիտելիքը ձևավորվում է ողջ կյանքի ընթացքում ուսումնառության, ինչպես նաև փորձի կուտակման արդյունքում: Իսկ ուղղաձիգ համատեքստը տեքստի սեփականությունն է: Ցանկացած տեքստ իր բազմազան հորիզոնական համատեքստերից բացի կարող է ունենալ նաև ուղղաձիգ համատեքստ: Տեքստի ցանկացած միավոր՝ իր բոլոր այսպես կոչված հորիզոնական համատեքստերով հանդերձ, կարող է ունենալ նաև ուղղաձիգ համատեքստ, ինչը մեր զգացմունքներին անհասանելի է:

«Ուղղաձիգ համատեքստը բանասիրական խնդիր է, որը փորձում է պատասխանել այն հարցին, թե ինչու և ինչպես է այս կամ այն գրողը պատկերացնում ընթերցողի կողմից իր ստեղծագործություններում անկողմնակալ կերպով գետեղված պատմաբանասիրական տեղեկության ընկալումը» (Ахманова, Гюббенет 1977): Կախված այն հանգամանքից, թե ինչ միջոցներով է ներկայացված ուղղաձիգ համատեքստը գրական ստեղծագործությունում, տարբերակում են բանասիրական (մեջբերումներ, գրական ադրադարձեր, ձևափոխված դարձ-

վածներ) և պատմահասարակական (տարատեսակ ռեալիաներ, հատուկ անուններ, տեղանուններ) ուղղաձիգ համատեքստեր:

Առհասարակ ցանկացած խոսք, լինի պայմանավորված այս կամ այն բանասիրական ավանդույթով, թե ոչ, մշտապես ընկալվում է համատեքստում: Ինչպես արդեն նշվեց, ուղղաձիգ համատեքստի կարգերի մեջ նախ և առաջ առանձնացվում են գրական անդրադարձերն ու մեջբերումները, ինչը բոլորովին էլ պատահական չէ: Բանն այն է, որ դրանց առկայությունը տեքստում հաճախ ուղղակիորեն ակնհայտ է և չի կարող չնկատվել, անգամ եթե ընթերցողը ոչ միշտ է հասկանում դրանց նշանակությունը: Գրական անդրադարձերի և մեջբերումների առկայության դեպքում ընթերցողի աչքից վրիպում են բառերը, որոնց իմաստները նա որպես կանոն ընկալում է որպես կարծրացած և ծածկագրված բառարանային սահմանումներ, և ոչ թե որպես հնարավոր զուգորդումների, պատկերացումների, տպավորությունների և գնահատականների կենդանի և դինամիկ ամբողջություն, ինչպես իրականում է: Ընթերցողը հազվադեպ է հարցադրում անում, թե ինչու է հեղինակը կամ նրա հերոսը կիրառում այս կամ այն բառը և ոչ թե մեկ ուրիշը, և թե ինչ իմաստային նրբերանգներ է արտահայտում տվյալ բառը՝ իրեն իմաստով մոտ այլ բառերի համեմատությամբ:

Ընկալման համար մեծ դժվարություն են ներկայացնում նաև իրողություն ցույց տվող բառերը՝ ռեալիաները (իրակությունները): Իսկ իրողությունների աշխարհը՝ որպես նյութեղեն աշխարհի, անչափ կարևոր է, քանի որ դրա միջոցով է ոչ նյութական աշխարհի ընկալումը դառնում հնարավոր:

Այստեղ ընկալման բարդությունն այն է, որ մի կողմից աշխարհն առավել ակներև է, տեսանելի և առավել բաց դիտարկման և գնահատման համար, անգամ երբ խոսքն օտար լեզվով գեղարվեստական ստեղծագործության ընկալման մասին է, որտեղ ընթերցողն իրեն վստահ է զգում կենցաղի, սովորույթների, պայմանների և այլնի մասին նկարագրություններին ծանոթանալիս: Գաղափարախոսության, հասարակական կառուցվածքի, պատմական զարգացման առանձնահատկությունների, մշակույթում առկա տարբերությունների դեպքում էլ այստեղ նկատելի է այն ընդհանրությունը, որը զուգորդումների, համանմանության և համեմատության հիմք է հանդիսանում և օգնում է հասկանալ կամ գոնե կռահել նշված երևույթի կամ առարկայի նշանակությունը կամ իմաստը: Հարկ է նաև շեշտել, որ ռեալիաները՝ իրակությունները, առավել հեշտ են մեկնաբանվում:

Ընթերցողը, գործ ունենալով չմեկնաբանված տեքստի հետ, կարող է հեշտությամբ մոլորվել և չնկատել ոչ պակաս կարևոր մանրուքները: Իսկ մանրուքների հանդեպ անուշադրությունը հանգեցնում է իմաստի՝ մասնակի կամ անգամ ամբողջական կորստի:

Գեղարվեստական ստեղծագործության ընկալման հարցում զգալի դեր ունի նաև տեղանունների և անձնանունների առկայությունը: «Տեղանունները իրակությունների տեսակ են, որոնք ներակայացնում են տարբեր աշխարհագրական անվանումներ՝ առանձնատներից մինչև քաղաքների, շրջանների անվանումներ» (Դյոժեհեթ 1991): Անձնանունները նույնպես իրակության տեսակ են, որոնք ներկայացնում են անձնանց անուններ, ազգանուններ:

Ե՛վ տեղանունները, և՛ անձնանունները հաճախ վրիպում են ընթերցողի ուշադրությունից: «Ընթերցողը, որպես կանոն, նկատում է կերպարի անունը և ազգանունը, եթե հեղինակը դրանց հատուկ ուշադրություն է դարձնում» (Դյոժեհեթ 1991:108): Դրանց թվին կարող են պատկանել նաև այսպես կոչված «խոսուն»

անձնանունները, որոնք ընթերցողի մոտ կարծրատիպային զուգորդումներ են առաջացնում: Սակայն իր հերոսին այս կամ այն կերպ անվանելով՝ հեղինակը կարող է առաջնորդվել անձնական զուգորդումներով, որոնք կարող են ոչ մի ընդհանրություն չունենալ հասարակության մեջ ընդունված զուգորդումների հետ:

Նույնը կարելի է ասել նաև աշխարհագրական տեղանունների մասին: Այս կամ այն տեղանվան առկայությունը տեքստում կարող է տարբեր նպատակների ծառայել՝ ընթերցողի մոտ զուգորդումներ առաջացնել, տեղափոխել ստեղծագործության դարաշրջան և այլն: Սակայն ոչ միշտ է, որ ընթերցողը կարող է կռահել հեղինակի մտադրությունը, նպատակը կամ էլ նկատել այնպիսի մի բան, որ հեղինակը անգամ չի էլ կասկածել: Մեկ խոսքով՝ «տեղանուններն ու անձնանունները ուղղաձիգ համատեքստի կարևորագույն կարգերը են, որոնց նկատմամբ անուշադրությունը նկատելիորեն աղքատացնում է գեղարվեստական ստեղծագործության մեր ընկալումը» (Гюббегет 1991:127):

Այս համատեքստում հարկ է նաև խոսել տեքստում օտար կամ միջազգային բառերի, արտահայտությունների, բառակապակցությունների կիրառման մասին: Վերջիններիս կիրառումը կարող է տարբեր նպատակների ծառայել՝ այս կամ այն առարկայի, երևույթի առեղծվածային կամ հիասքանչ լինելուց մինչև որևէ բանի կամ որևէ մեկի գռեհիկ կամ ծիծաղելի լինելը նկարագրելը:

Ուղղաձիգ համատեքստի դիտարկման շրջանակներում, ինչպես արդեն նշվել է, անչափ կարևոր դեր ունեն նաև մեջբերումները, որոնք ուղղաձիգ համատեքստ կառուցելիս հարստացնում են գեղարվեստական ստեղծագործությունը, սակայն մյուս կողմից էլ կարող են նաև այն «նեղացնել»՝ տանելով դեպի երգիծանք: Իսկ երգիծական ազդեցությունը հիմնականում ձեռք է բերվում այն ժամանակ, երբ մեջբերվող կերպարի և գործող անձի սոցիալ-լեզվաբանական նկարագրերը չեն համընկնում:

Ուղղաձիգ համատեքստի վերլուծությունը Ջ.Գ. Բայրոնի ստեղծագործություններում

Առհասարակ անգլիական գրականության մեջ լայն տարածում ունի ուղղաձիգ համատեքստը, ինչի էությունը մենք կփորձենք բացահայտել Բայրոնի ստեղծագործությունների հիման վրա:

Անգլիացի անվանի գրող Ջ.Գ. Բայրոնը և իր ստեղծագործությունները մշտապես եղել և մնում են բանասերների և լեզվաբանների ուսումնասիրությունների կիզակետում: Եվ անհերքելի է այն փաստը, որ գրողի ստեղծագործությունները հարուստ են ոճական հնարներով ու գեղարվեստական խոսքի պատկերավորման միջոցներով, ինչն էլ առավել խորքային և գրավիչ է դարձնում Բայրոնի ստեղծագործությունները: Բայրոնն իր ստեղծագործություններում ևս կիրառել է ուղղաձիգ համատեքստի վերոնշյալ կարգերը՝ գրական անդրադարձեր, մեջբերումներ, փոխաբերություններ, ռեալիաներ, փոխանունություններ և այլ ոճական հնարներ, և մենք կփորձենք բացահայտել դրանք, ինչպես նաև դրանց պատմահասարակական և պատմաբանասիրական հիմքերը և այն, թե ինչ նպատակով է Բայրոնը հենց այդ միջոցներին դիմել:

Առհասարակ անգլիական գրականության մեջ տարածված է մետա-ուղղաձիգ համատեքստը:

Բայրոնի ստեղծագործություններում, այդ թվում նաև՝ նամակներում, որոնք ոչ պակաս կարևոր են իրենց բովանդակությամբ ու ուղերձով, ուղղաձիգ համա-

տեքստի օրինակներն անսպառ են և անթիվ, քանի որ դրանցում ամեն տողում հանդիպում են գրական անդրադարձեր և մեջբերումներ հին հունական (Մեդեա), հռոմեական առասպելներից (Պիգմալիոն), Մերձավոր արևելքի գրականությունից, մշակույթից, պատմությունից (Քսերքսես՝ պարսից շահ), համաշխարհային գրականության անվանի հեղինակներից (հույն փիլիսոփա Արիստոտել, էպիկուր, Պլատոն, Հոմերոս, Հորացիոս, հռոմեացի բանաստեղծներ Պուբլիցիոս Վիրգիլիոս, Մարկ Մարցիալ, Դանթե Ալիգիերի), իր կողմից գնահատված գրողներ Թոմաս Բեմբել, Ջորջ Բրեք, Թոմաս Մուր, դրամատուրգ Շեքսպիր, Վալտեր Սքոթ, Ալեքսանդր Փոփ, Ուիլիամ Բլեյք, Աստվածաշնչից (Նոյան Տապան, Կայեն):

Բերենք օրինակ Բայրոնի՝ 1820 թվականի նոյեմբերի 3-ին Թոմաս Մուրին ուղարկած արժանահիշատակ նամակից. «... բարբարոսները պատի պես կանգնած են Պո գետի երկայնքով և առաջին իսկ, օրինական առիթով կանցնեն մյուս ափը... Եթե, անակնկալ վրա հասնի պատվավոր վախճանը՝ ձեր ծանոթներից մեկնումեկի, ապա հորինեք նրա մասին մի Մեդեդի², որպեսզի նրա ոգին, խեղճ Յորիկի ոգու պես սփռվի գոնե նրանով, որ իրեն վշտահար ողբացել կամ հիշատակել են առավել ոգեշունչ ոճով... »³:

Որպես պատմահասարակական փաստ պետք է նշել այն հանգամանքը, որ այդ ժամանակահատվածում Իտալիայի մի շարք քաղաքներում ընդհարումներ էին տեղի ունենում, իսկ սպառնալիքներ հաճախ էին հասցեագրվում իրեն՝ Բայրոնին՝ որպես ակնառու ապստամբի:

Բայրոնն իր ստեղծագործություններում հաճախ է հակադրվում և քննադատաբար անդրադառնում անգլիական ռոմանտիզմի Լճային դպրոցի ներկայացուցիչներին, ինչպիսիք են, Վիլիամ Ուորդսվորթը, Սամուել Թեյլոր Քոլրիջը: Հեղինակի երգիծական ստեղծագործություններում հաճախ կարելի է հանդիպել նաև պատմական դեմքերի (օր՝ Չորոզ/ Ջորջ Յորջ), ինչպես նաև իր ժամանակակիցների (օր՝ Լճային դպրոցի ներկայացուցիչ Ռոբերտ Սաուտի) անուններ, ովքեր բուն երգիծանքի թիրախն են (1809թ. լույս տեսած «Անգլիական երգիչները և շոտլանդական տեսաբանները» երգիծական պոեմը):

Բայրոնի ստեղծագործություններում հաճախ հիշատակվում են նաև տեղանուններ (Հելլենսպոնտ՝ Դարդանելի հին անվանումը, Ցիկլադներ՝ կղզախումբ էգեյան ծովում, Մեմֆիս՝ Եգիպտոսի հնագույն մայրաքաղաք) և այլն:

Հետևյալ տողերը «Բրոնզե դարը» երկից, որոնք ողողված են աշխարհագրական անուններով, գալիս են ապացուցելու վերը նշվածը՝

*To this the soldier lent his kindling match,
To this the peasant gave his cottage thatch,
To this the merchant flung his hoarded store,
The prince his hall- and **Moscow** was no more!
Sublimest of volcanoes! **Etna's** flame;
Vesuvius shows his blaze, an usual sight
For gaping tourists, from his hackneyed height:
Thou stands alone unrivalled, till the Fire
To come, in which all empires shall expire!* (p. 270)

Վերոհիշյալ տողերում զետեղված գեղարվեստական նրբերանգները հաս-

կանալու համար ահրաժեշտ է հիշատակված հրաբուխների մասին նախագիտելիք, որպեսզի բերված համեմատությունները չկորցնեն իրենց գեղեցկությունն ու հմայքը և տեքստին հաղորդեն գեղագիտականություն:

Նույն համատեքստում դիտարկենք ևս մեկ օրինակ հեղինակի ստեղծագործություններից.

*Mazeppa said - "Twere long to tell;
And we have many a league to go,
With every now and then a blow,
And ten to one at least the foe,
Before our steeds may graze at ease,
Beyond the swift **Borysthenes.**"*

Այսպիսով՝ Ջ.Գ. Բայրոնի «Մազեպա» երկից մեջբերված տողերում *Borysthenes* անվանումը, որը Հենրիկ Սևանի համանուն թարգմանության մեջ հիշատակվում է որպես Բորիսֆեն, մեզ Դնեպր անվամբ հայտնի գետի հին հունական անվանումն է, ինչի մասին հավանաբար կարելի է միայն տեղեկանալ Բայրոնի ստեղծագործությունները կամ որևէ հանրագիտարան թերթելիս:

Սակայն վերոհիշյալ տողերը և առհասարակ «Մազեպա» երկը ամբողջովին հասկանալու համար կրկին անհրաժեշտ է լինել բազմակողմանիորեն զարգացած ընթերցող և ունենալ խոր նախագիտելիքներ, քանի որ այս երկի վերնագիրն էլ արդեն ուղղաձիգ համատեքստի վառ օրինակ է. «Մազեպա» անունը այստեղ կիրառված է որպես փոխանունություն, սակայն ի տարբերություն իր նախատիպի⁴՝ Բայրոնն իր վերոհիշյալ երկում այլ՝ առավել ռոմանտիկ լույսի ներքո է ներկայացնում Մազեպային:

Հեղինակի ստեղծագործությունները, բացի վերոհիշյալ ոճական հնարներից, հարուստ են նաև դարձվածքներով և խոսքի պատկերավորման այլ միջոցներով, և հենց դրանց շնորհիվ էլ նրա ստեղծագործությունները դառնում են առավել խորքային և առավել պատկերավոր, օրինակ՝

***But Juan was a bachelor – of arts,
And parts, and hearts: he danc'd and sung, and had
An air as sentimental as Mozart's
Softest of melodies; and could be sad
Or cheerful, without any "flaws or starts,"
Just at the proper time; and though a lad,
Had seen the world – which is a curious sight,
And very much unlike what people write.***

Վերոնշյալ տողերը հեղինակի գլուխգործոցներից մեկի՝ «Դոն Ժուան» երգիծական երկից է, որը համաշխարհային գրականության այն գործերից է, որ թե՛ ձևով, թե՛ բովանդակության համապարփակությամբ, թե՛ բազում այլ հանգամանքներով շատ բարդ է և, ինչպես ինքը՝ հեղինակն, է ասում, «գալիս է ծաղրելու ամեն ինչ աշխարհում» (Բայրոն 1988): Իսկ վերոհիշյալ տողերում լեզվաոճական հնարը քողարկված է bachelor բառի մեջ, որն այս համատեքստում արտահայտում է ոչ թե մեկ այլ, երկու իմաստ՝ դրանով իսկ տեքստին հաղորդելով

գեղագիտական նրբերանգ: Բանն այն է, որ անգլերենում bachelor բառը մեկնաբանվում է որպես 1) a man who has never married (ամուրի), 2) a person holding a Bachelor's degree (բակալավր) (Oxford 2005):

Ավելին՝ մեջբերված տողերում ակնարկվում է նաև Մոցարտի ստեղծագործությունների զգացմունքայնության մասին՝ այսպիսով հարստացնելով ստեղծագործությունը նաև համաշխարհային մշակույթի պատմության մասին գիտելիքով:

Եզրակացություն

Ուղղաձիգ համատեքստի ընդհանուր և սեղմ սահմանումը տալու համար հարկ է հիշել ռուս լեզվաբան Ի.Վ. Գյուբբենետի դիտարկումը, համաձայն որի ընդհանուր ուղղաձիգ համատեքստը հասարակական կառուցվածք է, որը ներառում է հասարակական շերտերը պատկերելուն ուղղված բոլոր հասկացությունները, պատկերացումները և հայեցակետերը: Վերջիններիս իմացությունը անհրաժեշտ է, որպեսզի այս կամ այն ուղղությանը պատկանող ստեղծագործությունը կարդալիս տարբեր դարաշրջանների և երկրների ընթերցողները կարողանան հասկանալ այն:

Իսկ ինչպես արդեն նշվել է, ցանկացած գեղարվեստական ստեղծագործության մեջ ուղղաձիգ համատեքստը հասկանալու և բացահայտելու համար անհրաժեշտ է ունենալ խորը հենքային գիտելիքներ, այլապես լեզվաոճական և խոսքի պատկերավորման միջոցները կկոցնեն իրենց գեղագիտական և պատկերավորման ազդեցությունը, իսկ գեղարվեստական տեքստը կդառնա անհրապույր և պարզունակ: Բայրոնի ստեղծագործությունները ուղղակիորեն կարելի է համեմատել համայն մարդկության պատմության ամենաարժեքավոր և հիշարժան փաստերը, երևույթներն ու իրադարձություններն արտացոլող հանրագիտարանի հետ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Շեքսպիր, Հենրի Չորրորդ, մաս 1, գործողություն 5-րդ, երրորդ արար:
2. Թոմաս Մուրը գրել է Իռլանդական մեղեդիների շարք, ուր բանաստեղծորեն արտացոլել է իռլանդական ժողովրդի դիմադրության և պայքարի ոգին:
3. Թարգմանությունը՝ Հենրիկ Սևանի:
4. Իվան Մազեպա՝ ըստ լեգենդի Ուկրաինայի հետման, ով դավաճանեց Պետրոս Մեծին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ахманова, О.С. (1969) *Словарь лингвистических терминов*. М.: Советская Энциклопедия.
2. Ахманова, О.С.; Гюббенет, И.В. (1977) *Вертикальный контекст как филологическая проблема*. // Вопросы языкознания, Журнал №3, М.: Издательство МГУ.
3. Белинский, В.Г. (1955) *Полн. Собр. соч. в. 13-и т. т.7*. М.: Высшая школа.
4. Гюббенет, И.В. (1981) *К проблеме понимания литературно-художественного текста (на английском материале)*. М.: Издательство МГУ.

5. Гюббенет, И.В. (1991) *Основы филологической интерпритации литературно-художественного текста*. М.: Издательство МГУ.
6. Елистарова, А.А. (1960) *Наследие английского романтизма и современность*. М.: Высшая школа.
7. Задорнова, В.Я. (1984) *Восприятие и интерпритация художественного текста*. М.: Издательство МГУ.
8. Кургинян, М.Ц. (1958) *Джордж Байрон*. М.: Радуга.
9. (2005) *Oxford Advanced Learner's Dictionary*. Oxford: OUP.

ԳՐԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Բայրոն, Ջ.Գ. (1988) *Դոն ժուան*. Երևան: Սովետական գրող:
2. Բայրոն, Ջ.Գ. (1971) *Պոեմներ*. Երևան: Հայաստան հրատ.:
3. Byron, G.G. (1979) *Selections*. М.: Progress.
4. Byron, G.G. (1933) *Mazeppa*. Available at: <www.poetrysout.com/famous/poem/1933/mazeppa>[Accessed October 2014].
5. Byron, G.G. *Don Juan* Available at: <www.poetryfoundation.org/poem/173089> [Accessed December 2014].

Проявления вертикального контекста в произведениях Дж.Г. Байрона

В данной статье рассматривается значимость роли вертикального контекста в литературно-художественных произведениях, в частности, в произведениях знаменитого английского поэта-романтика Дж. Г. Байрона. В статье подчеркивается необходимость фонового знания читателя для адекватного восприятия вертикального контекста. Для полного восприятия того или иного литературного текста нужно определить те лингво-поэтические средства речи, аллюзии, цитаты, реалии, метафоры и другие лингвостилистические фигуры, которые придают литературно-художественному произведению эмоциональные оттенки и дополнительные смыслы. Байрон являлся мастером применения подобных лингвопоэтических средств, которые не только наделяют его произведения эстетическим воздействием, но и обогащают очень важной и ценной культурно-исторической информацией.

The Vertical Context in G.G. Byron's Works

The article discusses the significance of the role of vertical context in literary works, in particular in the works of the prominent English Romantic poet G.G. Byron. The article emphasizes the necessity of the so-called background knowledge of a reader for adequate perception of the vertical context. In order to entirely conceive a piece of literature, it is necessary to identify those linguopoetic means of speech – allusions, quotations, metaphors, realias and other linguostylistic devices which add emotional coloring and additional meanings to a literary work. Byron was a master of applying devices, which not only endowed his works with unparalleled aesthetic impact but also enriched them with very important and valuable historical and cultural information.